

1.2.7. Կազմակերպությունների ֆինանսական գործունեությունը

1.2.7.1. Կազմակերպությունների հաշվարկների վիճակը

1999թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ հանրապետության մոտ 960¹ խոշոր և միջին կազմակերպությունների ընդամենը կրեդիտորական պարտքերը կազմել են 200642,7 մլն. դրամ և տարեսկզբի նկատմամբ նվազել 3249,3 մլն. դրամով կամ 1,6 %-ով, իսկ 1999թ. հուլիսի 1-ի համեմատ կրեդիտորական պարտքերն աճել են 5217,4 մլն. դրամով, կամ 2,7 %-ով: Կրեդիտորական պարտքերի ընդհանուր ծավալում կարճաժամկետ պարտքերի տեսակարար կշիռը կազմել է 89,2 % (179014,0 մլն. դրամ): Տարեսկզբի նկատմամբ կարճաժամկետ կրեդիտորական պարտքերն աճել են 7947,8 մլն. դրամով, կամ 4,6 %-ով, իսկ 1999թ. հուլիսի 1-ի համեմատ նշված պարտքերն աճել են 11502,3 մլն. դրամով, կամ 6,9 %-ով: Կարճաժամկետ կրեդիտորական պարտքերից 46924,0 մլն. դրամը կամ 26,2 %-ը կազմել են ժամկետանց պարտքերը, որոնք տարեսկզբի նկատմամբ աճել են 20,4 %-ով, իսկ 1999թ. հուլիսի 1-ի նկատմամբ՝ 16,9 %-ով:

1999թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ ընդամենը կրեդիտորական պարտքերի 43,4 %-ը բաժին է ընկել մատակարարների և կապալառուների հետ հաշվարկներին (87052,8 մլն. դրամ): Տարեսկզբի համեմատ նշված պարտքերը նվազել են 15,7 %-ով, իսկ 1999թ. հուլիսի 1-ի համեմատ աճել են 21,1 %-ով:

Կազմակերպությունների կրեդիտորական պարտքերի կառուցվածքը 1999թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ.

	Տարեսկզբի մնացորդը	Հաշվետու ժամանակաշրջանի վերջի մնացորդը	Ավելացում (+) պակասում (-)
<i>(մլն. դրամ)</i>			
Կրեդիտորական պարտքեր- ընդամենը	203892,0	200642,7	-3249,3
<i>այդ թվում՝</i>			
-երկարաժամկետ	32825,8	21628,7	-11197,1
-%-ով ընդամենի նկատմամբ	16,1	10,8	
-կարճաժամկետ	171066,2	179014,0	+7947,8
-%-ով ընդամենի նկատմամբ	83,9	89,2	
<i>այդ թվում՝ ժամկետանց</i>	38956,5	46924,0	+7967,5
-%-ով ընդամենը կարճաժամկետ կրեդիտորական պարտքերի նկատմամբ	22,8	26,2	
Ընդամենը կրեդիտորական պարտքերից հաշվարկներ մատակարարների և կապալառուների հետ	103239,8	87052,8	-16187,0
-%-ով ընդամենը կրեդիտորական պարտքերի նկատմամբ	50,6	43,4	
Հաշվարկներ ստացված կանխավճարների գծով	19131,7	22909,9	+3778,2
-%-ով ընդամենի կրեդիտորական պարտքերի նկատմամբ	9,4	11,4	

Հայաստանի կազմակերպությունների միջև կրեդիտորական պարտքերը կազմել են 164013,3 մլն. դրամ կամ ընդամենի 81,7 %-ը, ԱՊՀ երկրներինը համապատասխանաբար՝ 18015,7 մլն. դրամ կամ 9,0 %-ը: ԱՊՀ երկրների կազմակերպությունների պարտքերի 90,8 %-ը բաժին է ընկնում Ռուսաստանի Դաշնությանը, 4,3 %-ը՝ Ռեպուբլիկային, 3,8 %-ը՝ Վրաստանին:

1999թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ հանրապետության մոտ 960 խոշոր և միջին կազմակերպությունների ընդամենը դեբիտորական պարտքերը կազմել են 125860,8 մլն.

¹ Առանց էներգետիկայի նախարարության կազմակերպությունների

դրամ և տարեսկզբի նկատմամբ աճել՝ 24524,9 մլն. դրամով կամ 24,2 %-ով, իսկ 1999թ. հուլիսի 1-ի նկատմամբ աճել՝ 1584,2 մլն. դրամով, կամ 1,3 %-ով:

Ընդ որում, տարեսկզբի համեմատ երկարաժամկետ դեբիտորական պարտքերն նվազել են 558,1 մլն. դրամով, կամ 11,8 %-ով, իսկ կարճաժամկետ պարտքերն աճել են 25083,0 մլն. դրամով, կամ 25,9 %-ով: Ընդ որում, 1999թ. հուլիսի 1-ի համեմատ երկարաժամկետ դեբիտորական պարտքերը նվազել են 2524,2 մլն. դրամով, կամ 37.6 %-ով, իսկ կարճաժամկետ պարտքերն աճել՝ 4108,4 մլն. դրամով, կամ 3,5 %-ով:

1999թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ կարճաժամկետ դեբիտորական պարտքերի 24,3 %-ը (29543,8 մլն. դրամ) կազմել են ժամկետանց պարտքերը, որոնք տարեսկզբի նկատմամբ աճել են 473,8 մլն. դրամով, կամ 1,6 %-ով, իսկ 1999թ. հուլիսի 1-ի նկատմամբ ժամկետանց պարտքերը նվազել են 345,1 մլն. դրամով, կամ 1,1%-ով:

Ընդամենը դեբիտորական պարտքերի 57,6 %-ը կամ 72543,2 մլն. դրամը կազմել են գնորդների և պատվիրատուների հետ հաշվարկները: Նշված պարտքերը տարեսկզբի համեմատ ավելացել են 16621,0 մլն. դրամով կամ 29,7 %-ով, իսկ 1999թ. հուլիսի 1-ի համեմատ նվազել է 521,4 մլն. դրամով, կամ 0,7 %-ով:

Կազմակերպությունների դեբիտորական պարտքերի կառուցվածքը 1999թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ բնութագրվում է հետևյալ տվյալներով.

(մլն. դրամ)

	Տարեսկզբի մնացորդը	Հաշվետու ժամանակաշրջանի վերջի մնացորդը	Ավելացում(+) պակասում(-)
Դեբիտորական պարտքեր- ընդամենը	101335,9	125860,8	+24524,9
<i>այդ թվում՝</i>			
-երկարաժամկետ	4744,6	4186,5	-558,1
-%-ով ընդամենի նկատմամբ	4,7	3,3	
-կարճաժամկետ	96591,3	121674,3	+25083,0
-%-ով ընդամենի նկատմամբ	95,3	96,7	
<i>այդ թվում՝ ժամկետանց</i>	29070,0	29543,8	+473,8
-%-ով ընդամենը կարճաժամկետ դեբիտորական պարտքերի նկատմամբ	30,1	24,3	
Ընդամենը դեբիտորական պարտքերից հաշվարկներ գնորդների և պատվիրատուների հետ	55922,2	72543,2	+16621,0
-%-ով ընդամենը դեբիտորական պարտքերի նկատմամբ	55,2	57,6	
Հաշվարկներ տրված կանխավճարների գծով	6901,1	13303,4	+6402,3
-%-ով ընդամենը դեբիտորական պարտքերի նկատմամբ	6,8	10,6	

Հայաստանի կազմակերպությունների միջև դեբիտորական պարտքերը կազմել են 105550,6 մլն. դրամ, կամ ընդամենի 83,9 %, ԱՊՀ երկրներինը համապատասխանաբար՝ 4690,6 մլն. դրամ և 3,7 %: ԱՊՀ երկրների կազմակերպությունների դեբիտորական պարտքերի 80,4 %-ը բաժին է ընկնում Ռուսաստանի Դաշնությանը, 7,6%-ը՝ Ուկրաինային, 5,6 %-ը՝ Բելառուսիային:

1999թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ դուրս գրված անհուսալի դեբիտորական պարտքերը կազմել են 1157,5 մլն. դրամ, կամ ընդամենը դեբիտորական պարտքերի 0,9 %-ը, իսկ դուրս գրված անհուսալի կրեդիտորական պարտքերը համապատասխանաբար՝ 5687,4 մլն. դրամ, կամ 2,8 %-ը:

1999թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ կրեդիտորական պարտքերը գերազանցել են դեբիտորականին 74781,9 մլն. դրամով, կամ 59,4 %-ով: